«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում քննադատական մտածողության զարգացումը համագործակցային մեթոդների միջոցով:

ԱՌԱՐԿԱ **Հասարակագիտություն**

ՀԵՂԻՆԱԿ **Սյուզաննա Հովսեփյան**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ **Շողակաթի միջնակարգ դպրոց**

Բովանդակություն

1. Ներածություն
2. Քննադատական մտածողության նախապատմությունը
3. Քննադատական մտածողության ուսուցում
4. <<Ինչու՞ և Ինչպե՞ս զարգացնել քննադատական մտածողությունը իմ առարկայի շրջանակներում>>թեմայով
5. <<Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառությունը և աշակերտների առաջնորդության զարգացումը>> թեմայով:
6. Համագործակցային ուսուցման մեթոդներ
7. Քննադատական մտածողության հինգ ռազմավարությունը
8. Դասապլան
9. Եզրակացություն
10. Գրականության ցանկ

Ներածություն

Քննադատական մտածողությունը ճանաչողական գործընթաց է, որը ձևավորվում է փորձի արդյունքում ստացված տեղեկույթի վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խոսքի հաղորդակցամ միջոցով: Քննադատական մտածողությունը տրամաբանական, ստեղծագործական մտածողության յուրահատուկ համադրում է: «Քննադատական մտածողությունը ներառում է մտածական գործառությունները, որոնք իրականացվում են դատողությունների և փաստարկումներից էլնելով՝ որը հնարավորություն է ընձեռում բացահայտել, հիմնախնդիրը, առաջադրել վարկած, բերել հիմնավորված փաստարկներ, հիմնավորելը, հետևանքների կանխատեսում, այլընտրանքային տեսակետներն ընդունելը կամ չընդունելը: Այն ներառում է իմացական հիմնական կարողությունները (գիտելիք և ըմբռնում) կիրառելու ունակությունը բարդ և ոչ միանշանակ իրավիճակների ու հիմնախնդիրների համադրման, վերլուծության և գնահատման համար:

Հետազոտությանս **նպատակն** է՝ առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում:Այն կարելի է զարգացնել բաց հարցերի միջոցով,որը կարող է տանել դեպի քննական մտածողությանը :

Արդիականությունը՝ քանի որ ապրում ենք 21-րդ դարում և հին մոտեցումները ,անգամ համացանցը ողողված են տարատեսակ նյութերով, լուրերով այն տարանջատելու ,իրականությունը կեղծիքից ,մարդիք կարող են եզրահանգումներ անել չտարբերակելով իրականությունը, հիմնավորումներ բերեն առանձ հիմնովին խնդրին կամ երևույթին խորքային ծանոթանալու:

Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության որոշակի փոխանցելի հմտություններ ձևավորել 21-րդ դարի սովորողի մոտ:Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները:Այդ իսկ պատճառով այս ամենին հասնելու համար ողջ դասապրոցեսի ընթացքում պետք է սովորեցնել քննադատորեն մոտենալ ,ազատ արտահայտվել փաստեր ներկայացնել , բերել ապացույցներ, հիմնավորել սեփական տեսակետը:: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

- կանխորոշում են ուսումնառության նպատակները,

- հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,
- նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,
- ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Իրենց տեսակետներն են հայտնել հայտնի մարդիկ՝ Սուխոմլինսկին, Դայանա Հալպերնը, ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը:«Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման:5

Քննադատական մտածողության նախապատմությունը

Քննադատական մտածողությունը սովորոբար հակադրվում է արխայիկ կամ դոգմատիկ մտածողույանը, որը իր տրամաբանությամբ, կառուցվածքվ ու գործառնական նպատակադրմամբ որոշ դեպքերումանգամ բացառում է քննադատական մոտեցումներն ու վերլուծությունը: Դոգմատիկ մտածողությունը համաձայնությունների ու պայմանավորվածությունների վրա հիմնված մտածողությունն է,որի հիմնական խնդիրը կայանում է կարծրատիպերի ձևավորման մեջ:Դոգմատիկ սակայն աշխարհի նկարագրությունն ու նույն աշխարհի մասին մարդու իրական ընկալումն փոփոխվում է, օրինակ հազարամյակներ շարունակ Քրիստոնեական Եվրոպայում մարդիկ հիմնվել են իրենց գիտելիքների վրա, և համոզված էին, որ ամեն ինչ պտտվում է երկրի շուրջ, երբ Գալիլեյը, Բրունոն, Կոպեռնիկոսը,սկսեցին գիտելիքների վրա հիմնված պնդումներ անել արևակենտրոն համակարգի մասին, ապրող հասարակությունը սկզբնական շրջանում չընդունեց այդ նոր գիտելիքը,ավելին ընդիմացան:Ժամանակակից աշխարհում քննադատական մտածողության կարևորությունն էլ ավելի է մեծանում,քանի-որ տեղեկատվական աշխարհում, բազմամասնություն շինծու վարկածներ է առաջ քաշում, այդ թվում նաև տեղեկատվության արտահոսքը,ստիպում է հասարակությանը քննադատական մոտեցում ցուցաբերի, տարբերակելով զանազանելով գիտելիքը, ֆիլտրել,նոր գործիքներ ու մեթոդներ առաջ քաշել,և դասակարգելով առանձնացնել այն տեղեկատվությունը որը առաջնային է:

Քննադատական մտածողության ուսուցում

Քննադատական մտածողությունը մտածողության 24 հիմնական տեսակներից մեկն է և այն փոխազդում է մտածողության այլ տեսակների հետ, ինչպիսիք են.

1.հայեցակարգային մտածողություն

2. հարցական մտածողություն

3. հետաքննական մտածողություն

4.տարամիտ մտածողություն

5.Տրամաբանական մտածողություն

6. Համակարգային մտածողություն

7.ռեֆլեկտիվ մտածողություն

8. դեդուկտիվ մտածողություն

Քննադատական մտածողություն ասելով հասկանում ենք դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց :

Քննադատաբար մտածելու կարողություն – Քննադատաբար մտածելու կարողությունը դա խնդիրները և ենթադրությունները վերհանելու, կարևոր հարաբերակցությունները ճանաչելու, ճիշտ եզրակացություններ անելու, փաստերը գնահատելու և եզրահանգումներ կատարելու հմտությունն է:

Դասավանդման տեխնիկաներ – Դասավանդման տեխնիկաները դրանք ուսուցչի կողմից դասապրոցեսում կիրառվող դասավանդման մեթոդներն են և հանձնարարված աշխատանքները:

Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը կարող է հիշել, տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվությունը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, դիագրամաների, ձայնի և այլնի միջոցով:

Ընկալման մակարդակում սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը:Այն կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով:

Տաքսոնոմիայի կրրառման մակարդակում սովորողը կարող տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն: Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է վերլուծություն, սովորողը կարող է ճանաչել տեղեկատվության հիմնական

կազմվածքն ու կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող է տարբերել փաստերը ենթադրություններից: Բլումի տաքսոնոմիայի հինգերորդ մակարդակը վերաբերում է սինթեզին: Այս մակարդակում սովորողը կարող տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական նյութը, տեսակետը, դիրքորոշքումը ձևավորելու նպատակով: Եվ վերջապես վերջին՝ գնահատման մակարդակում սովորողը կարող որոշակի չափանիշներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար: Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ սովորողներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները: Բլումի տասքոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում:Պետք է նշել, որ վերլուծելով Բլումի Տաքսոնոմիան առավել հստակ է դառնում մասնագետների շրջանում առկա այն վեճը, թե արդյոք քննադատական մտածողությունը համընդհանուր հմտություն է, թե սահմանափակվում է մեկ ակադեմիական առարկայի շրջանակներում: Տաքսոնոմիայի առաջին երեք մակարդակները՝ գիտելիք, ընկալում, և կիրառում, առավել հատուկ են ակադեմիական առարկային, իսկ հմտությունները, որոնցով պայմանավորված են վերլուծությունը, սինթեզը և գնահատումը, ընդհանուր են և չեն կարող սահմանափակվել մեկ առարկայով: Սա նշանակում է, որ եթե քննարկում է ծավալվում որևէ խնդրի շուրջ, անհատը, որը ցանկություն ունի մասնակցելու այդ քննարկմանը, պետք է նախ ունենա համապատասխան գիտելիք տվյալ խնդրի մասին և ընկալի խնդիրը, որն իր հերթին հիմք կծառայի քննադատական մտածողության հմտությունների կիրառման համար:

Մոդելի երկրորդ փուլը դա ճիշտ հարցադրումեր անելն է:Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից կարևոր են տարամետ հարցերը, որոնք սովորաբար լինում են բաց հարցերի տեսքով, նպաստում են քննարկումների ծավալմանը և հետևաբար նպաստում են քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը:

Երրորդ փուլը դա նախքան գնահատելն հնարավորություն ընձեռել սովորողին իմացական գիտելիքները տանել դեպի կիրառական դաշտ: Ուսուցումը այս պարագայում պետք է լինի ինտերակտիվ :

Չորրորդ փուլը դա արդեն փոքրինչ բարդեցված վերանայել սեփական վարքագիծը, բարելավման ուղղություններ փնտրել և մշակել ռազմավարություն ,կատարելագործվելու ինքնակրթությամբ:

Վերջնական փուլում ենթադրվում է հետադարձ կապի արդյունավետ տրամադրումը , ուսումնառության գնահատումը:Այն հնարավորություն է ընձեռում սովոողին տեսնել իր ապագայի

տեսլականը ,ինչ ներդրում կունենա իր ձեռք բերված կարողունակությունները ապագայում տեղին կիրառելու համար:

Քննադատական մտածողությունը սերտորեն կապված է փիլիսոփայություն, նրա գոյության պատճառի մի մասն է: Փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, քան գիտելիքի որոնում մի քանի հիմնարար հարցեր տալով, որոնք օգնում են դիրքավորվել և մոտենալ դրան: Նրանք այս սահմանման տակ կարող են դիտվել որպես նման, այն տարբերությամբ, որ փիլիսոփայությունը կառուցում և համակարգում է քննադատական մտածողությունը ակադեմիական առարկայի մեջ:

Բացի այդ, մենք կարող ենք քննադատական մտածողություն տեսնել այլ առարկաներում և աշխատանքային այլ կիրառություններում, թեև փիլիսոփայության մեջ ավելի քիչ հաճախականությամբ, օրինակ՝ լրագրության մեջ, կամ դատավորի, որը պետք է գնահատի և պահպանի ճշմարիտ տեղեկատվությունը ճիշտ դատողություն հաստատելու համար:

Քննադատական մտածողության հինգ հարցերը որոնք հնարավորություն կտան դասարանում զարգացնել սովորողների քննական վերլուծությունը

- Ինչ է կատարվում :
- Ինչու է դա կարևոր
- Ինչ է պակասում
- Ինչպես կարող եմ իմանալ այն ,ինչ կարծում եմ ,որ գիտեմ
- Ով կարող է դա ասել
- Ինչու,էլ ինչ ես գիտեմ
- Ինչով կտարբերվի ձեր տեսակետը
- Ինչպես կլուծեիք այդ խնդիրը
- Համաձայն ե՞ք թե ոչ
- Ինչպես կարող եք խուսափել այս խնդրից ապագայում

<<Ինչու՞ և Ինչպես՞ զարգացնել քննադատական մտածողությունը իմ առարկայի շրջանակներում>>թեմայով

Քննադատական մտածողությունը զարգացնում է կարդալ ու և գրելու հնագույն մշակույթը: Այն լայն հնարավորությունն է, որի ժամանակ սովորողներին հնարավորություն է ընձեռում վերլուծելով համադրելով հակադրելով փաստերը երևույթները:Որը հնարավորություն է ընձեռում հասարակագիտության, պատմության դասաժամերին սաներին պատմական դեպքերը համադրել,հակադրել մտածել գտնել ճիշտ և սխալ կողմերը: Այն հնարավորություն կտա սաներին ոչ միայն առարկանների շրջանակներում քննադատական մտածողություն զարգացնել այլ այն լայն հնարավորություն կընձեռնի ապագայում, որպես ուսանող կամ գործարար առողջ քննադատական վերլուծություն անել:

Ինչու՞- Քննադատական մտածողությունը կարևոր հմտություն է,որը հասարակագիտության նաև պատմության դասաժամին ունի իր ուրույն տեղը, որի ընթացքում սովորողները չեն մտածում նույնանման, կարող են տալ տարբեր պատասխաներ, կառաջարկեն խնդրին տալ նորովի մոտեցումներ, ինչու չէ նաև մտածելակերպի փոփոխությունը կբերի պատմական դեպքերի համադրումը ,զուգահեռներ տանելով անցյալի և ներկայի համադրմամբ:

Ինչպես՞- Պատմության հասարակագիտություն դասաժամերին սովորողները կարող են ինքնուրույն կատարել տեքստերի համադրում վերլուծություն, բացահայտել դրական և բացասական կողմերը ,արտահայտեն սեփական կարծիքը առանց կաշկանդվելու: Հասարակագիտության,պատմության դասաժամերին տանել ազատ քննարկումներ, բանավիճել,պահպանել իրենց տեսակետների պնդումները ,որոնք թույլ են տալիս զարգացնել քննադատական մտածողությունը ,պատմական դեպքերը վերլուծել նաև պատկերների միջոցով:Պատմության, հասարակագիտության դասաժամին շատ կարևոր է ապահով առողջ մթնոլորտ,հարգալից վերաբերմունք մեկը մյուսի կարծիքների վերաբերյալ:

Կարևոր հմտություններից մեկն է քննադատական մտածողությունը ,առանց դրա անհնար է ներկայացնել առարկան ,պատմության,հասարակագիտության շրջանակներում քանի-որ ինքը ունի կարևոր տեսանկյուն , օր մաթեմատիկան համարվում է ճշգրիտ գիտություն,իսկ պատմությունը հնարավորություն է տալիս դեպքերը երևույթները դիտարկել բոլոր տեսանկուներից, առանձնացնել ճիշտը սխալից, հասասրակագիտությունը օրենքներ ենթաօրենսդրական կարգավորումներ,նաև այլ տեսանկյունից ,որը ընդունում են մեծամասնությունը,համարելով փաստարկված կամ ճիշտ,օր Արցախյան հարցը , ադրբեջանցիները դիտարկում են ,որ այն համարվում է իրենց տարածքային

ամբողջականությունը, իսկ մեր տեսանկյունից այն մեր պատմական Հայաստանի մի մասն է կազմում: Եթե չլինի քննադատական մտածողությունը հասարակագիտության , պատմության դասժամերին ,ապա դժվար կլինի ապացուցել թե,որ կողմի փաստարկներն են հիմնավորված:Այս ամենի հիմքում տեղի է ունենում փաստերի վերլուծություն,համադրում,հակադրում, համեմատում և վերջում տրվում է հարցերի փաստացի լուծումները:

<<Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառությունը և աշակերտների առաջնորդության զարգացումը>> թեմայով:

Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառությունը հնարավորություն է ընձեռում սովորողներին բացահայտել ,Ինչպես՞տեղացիների համայնքի հնարավորությունները ,այնպես էլ իրենց ներ ուժը համայնքում ,նախագծեր մշակելու և իրականացնելու համար, տալով դրանց նորարական մոտեցումներ:

Ինչպես՞ Ցուցաբերել քաղաքցիական պատասխանատվություն և օգտագործել համաշխարհային նախագծեր մշակելու և այն տեղին օգտագործելու համայնքի զարգացման համար, տալով խնդրին իրատեսական լուծումներ:
Ինչ՞ է իրենից ներկայացնում ՓՀՈԻ-ն - այն նախագծային ուսումնառության մի ձև է,որը ունի հստակ նախագծված 5 քայլեր:
1-քայլ. Դա ուսուցչի կողմից առաջադրված Մեծ գաղափարն է,որտեղ օգտագործվում են նաև հանրակրթական ծրագրերը:Մեծ գաղափարի հենքը հանդիսանում է ՓՀՈԻ-ն, ոգեկոչել սովորողներին ապագայի տեսլականը նախագծելու և իրականացնելու համար:
2. -քայլում սովորողները ուսումնասիրում են ինքնուրույն Մեծ գաղափարը :
3.-քայլ-ի ժամանակ սովորողները աշխատում են խմբերով և ներկայացնում նախագծի առաջարկ, որը կարող են իրականացնել իրենց ,իսկ համայնքներում,որը ապագայում կարող է հենք հանդիսանալ նորարական մոտեցումներին:
4-քայլ.Սովորողները քայլեր են մշակում իրենց գաղափարները իրատեսական և շոշափելի դարձնելու ուղղությամբ, տանելով դեպի կիրառական դաշտ:

5-քայլ. Սովորողները այս վերը նշված քայլերից հետո իրականացնում են նախագծի իրականացման գնահատումը, որտեղ սովորողները հստակ քայլերով իերնք, իսկ դառնում են նորարության կրողն ու փոխանցողը:

Հիմնավորե՛ք, թե ինչպես է ՓՀՈԻ-ն նպաստում առաջնորդության զարգացմանը:

Ինչու՞ է կարևոր փոփոխությունների վրա հիմնված ուսումնառությունը, քանի -որ այն հնարավորություն է տալիս սովորողներին ոչ՛միայն սովորել գիտելիք ձեռք բերել այլ նաև այն տանել դեպի կիրառական դաշտ:Հնարավորություն է նաև ընձեռնում խնդրին մոտենալ իրատեսական լուծումներով, օգտագործելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաները իր նախագծերը ավելի լայն լսարան տեղափոխելու համար:ՓՀՈ-ի ժամանակ սովորողը պասիվ դիրքից տեղափոխվում է ակտիվ ընկնդրողի, որտեղ ինքը ինքնուրույն է կատարում իր աշխատանքները սովորելու ողջ ընթացքում, ուսուցիչը միայն հանդես է գալիս ուղղորդողի և հավաստի փաստեր փոխանցող:

Ինչպես՞-Հայոց պատմության ,հասարակագիտության և հարակից մյուս առարկաների ժամանակ ,սովորողները ինքնուրույն կարող են բացահայտել համայնքի ուժեղ և թույլ կողմերը կատարելով խորքային հետազոտություն, և վերջում գտնել դրա լուծման հնարավոր իրատեսական պատասխանները:

ՓՀՈ-ի քայլերն են՝

1. Մեծ գաղափար

2. Ուսումնասիրություն

3. Նախագծել

4. Քայլեր ձեռնարկել և գործել

5.և վերջում կատարել աշխատանքի գնահատում.

Այս ամենի արդյունավետությունը ապահովվելու համար կարևոր է նաև ուսուցչի դերը, որտեղ ուսուցիչը դառնում է ուղղորդող ողջ գործընթացի ընթացքում, ճիշտ ուղղորդող հարցեր և ռեսուրսներ ունենալով իր ձեռքի տակ փոխանցելով նաև ,հավաստի աղբյուրներ, իսկ սովորողները դառնում են ինքնուրույն հետազոտողներ,իրենց ուսումնառության ողջ ընթացքում,գտնելով խնդրի լուծումներ,որի ժամանակ ձեռք են բերում ակադեմիական լայն խորքային գիտելիքներ:Այս ամենի հիմքում փոփոխություններ բերելով,ուսումնառության ողջ

ընթացքում և համայնի զարգացմանը:Ձևավորվում է նաև պատասխանատվության զգացում, զարգացնելով բազում հմտություններ, կկարողանան նաև գնահատման ժամանակ քննադատական մտածողության մոտեցումներ ցուցաբերեն վերլուծությունը կարող են իրականացնել նաև SWOT-<<ՍՎՈՏ >>գործիքի միջոցով:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:Այս բոլոր մեթոդները յուրաքանչյուր թեմայի համար յուրովի է , ամեն դաս իր բարդության և նրբության աստիճանը ունի այդ իսկ պատճառով կիսվում եմ սեփական փորձով կիրառած մեթոդները ,որը սովորել և տարել եմ կիրառական դաշտ Եդու Արմենիա կրթական առցանց զումախմությունների միջոցով:

Քննադատական մտածողության արդյունք է…

- Ինֆորմացիան քննելը ,
- Յուրացնելը ,որը պատասխանում է հետևյալ հարցադրմանը, Ինչ՞ է սա նշանակում ինձ համար.
- Ձևափոխել
- Հարմարեցնել-որը ունի հետևյալ հարցադրումը ,ինչպես՞ է այս գիտելիքը կապվում իմ պատկերացումների հետ:
- Ժխտել- Արդյոք՞ սա օգտակար է:
- Քննադտական մտածողության տեխնոլոգիան իր անմիջական փոխկապակցվածությունը ունի մանկավարժական տեխնոլոգիայի հետ ,դա հնարավորություն է ընձեռում սովորողներին լինել ուսուցման գործընթացի ողջ ընթացքում ակտիվ մասնակից:Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է ,որը սկսվում է ինֆորմացիայի ստացումից ,յուրացումից, ժամանակի կառավարումից, հնարավորությունից, ինֆորմացիայի բազմազանությունից ,սովորողների ներգրավվածությունից ,սաների համարձակությունից, միմիյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքից որը նույնպես կարևոր արժեհամակարգ է հասարակագիտության

դասաժամերին ,և ամենակարևորը միմիյանց խոսքը,դիրքորոշումը,տեսակետը արժևորելը:

- Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդներն են ,մտագրոհը, փոխգործուն նշանները, ճանաչողության կարողունակությունները, քառաբաժանումը, պրիզման, կմախքը,մանրապատումը:
- Հարցադրումը- հաղորդակցական կարողունակություններ է զարգացնում որի ժամանակ սովորողները հասկանում են ճիշտ հարցադրումներ տալու նուրբ մշակույթը կամ ինքնուրույն են մշակում հարցերը, որոնք պետք է զանազանեն իրենց կառուցվածքով,բաց և փակ հարցեր:
- Համագործակցային-Ձիգսո, խճանկար, շրջանաձև շարադրանք:
- Ստեղծագործական կարողունակություն- հնգյակ, բանալի բառեր:

- Ինքնուրույն հմտությունների զարգացում-ԳՈՒՍ,երկու աստղ, մեկ ցանկություն:
- Արժեքային համակարգ- դա իրականացվում է հատուկ մշակված ռուբրիկով:

Բարդության բացահայտումը

Բարդության բացահայտման քայլարշավը սկսվում է .

Գտեք-գաղափար կամ տեսարան,որը գրավեց Ձեր աչքը:Մեկ բառով կամ արտահայտությամբ գրի թե ինչ է դա:

Բռնեք- ժամանակ հատկացրեք Ձեր գաղափարը ուշադիր զննելու համար:

Բացատրեք- Ձեր գաղափարը տեսողականորեն նկարելուց հետո գրեք պարբերություն: երեք նախադասություն այս գաղափարի բարդության մասին:

Հարցրեք- Ինչ՞ նոր գաղափարներ և հարցեր ունեք Ձեր նկարածի վերաբերյալ:

Ելքի տոմս (4)

Ես նկարում եմ որևէ գաղափար,միտք

Ինչու՞ է այդպես կամ Ինչու այդպես եղավ.

Սարդոստայնի մեթոդ

Այս մեթոդի կարևորությունը կայանում է նրանում որնախորոք կատարվում է դերաբաշխում,թեմայի ընտրություն և հարցադրում:

Ցանց նկարող- Գծապատկերում է խոսակցության ցանցը:

Շրջանակի մեջ առեք առաջին սանի անունը, այնուհետեւ գիծ քաշեք առաջին սանից դեպի հաջորդ խոսացողը:

Հարց տվող- Ամբողջ քննարկման ընթացքում տալիս է երեք եւ միայն երեք հարց, ուստի դրանք պետք է լինեն շատ լավ մտածված հարցեր, որոնք նպատակ ունեն նոր կամ ավելի լավ քննարկում առաջացնել: Չեն

կարող խոսել,միայն հարցեր են տալիս:

Տեքստային ապացույցների պատասխանատու- Քննարկման հիմնական գաղափարների հիմնավորումը ապահովողը .Մինչ սաները քննարկում են, Տեքստային ապացույցների առաջնորդը փորձում է գտնել այն մեջբերումը, որը կաջակցի քննարկվող կետին, կամ հուշում է բանախոսին դա անել: Եթե դասարանն ինքնուրույն է դա անում, ՏԱՂ-ը կարող է կարիք չունենա շատ հուշումներ անել, բայց նրանք այնտեղ են, որպեսզի հիշեցնեն դասարանին, թե երբ պետք է հղում կատարեն տեքստին՝ իրենց կետերը հաստատելու համար:

Հաղորդավար- հրավիրում է քննարկման սաներին, ովքեր լուռ են եւ դեռ շատ կամ ընդհանրապես չեն մասնակց

ել: Հաղորդավարները պետք է նպատակ ունենան լինել «լավ հյուրընկալող» եւ առաջարկեն ավելի քիչ վախեցնող,

ավելի հեշտ հարցեր իրենց «հյուրերին», քանի որ սա սթրեսային է:

Հետադարձ կապ տվող- Միակ սանը, ով լռում է ամբողջ դասի ընթացքում: Այս սանի աշխատանքն է ունենալ քննարկման ռուբրիկի պատճենը եւ ամբողջ քննարկման ընթացքու

մ նշումներ անել այն մասին, թե ինչն է լավ աշխատել եւ ինչը ոչ: Հետադարձ կապ տվողը խոսում է միայն այն ժամ

անակ, երբ քննարկումն ավարտված է, եւ սկսվում է ամփոփագիրը:

Գրաֆիկ գծողը ցույց է տալիս քննարկմանգրաֆիկը, եւ Հետադարձ կապ տվողը, այնուհետեւ, շարունակում է կիսվ

ել իր դիտարկումներով:

Բառապաշարի պատասխանատու- Պատասխանատու է ընթացիկ բառապաշարի եւ գրական տերմինների գրառելու հա

մար, որոնց վրա մենք աշխատում ենք որպես դասարան եւ համոզվում ենք, որ ամեն անգամ առնվազն մեկ նոր եզ

րույթ է օգտագործվում՝ կա՛մ իր կողմից, կա՛մ որեւէ մեկի կողմից:

Ռուբրիկի ղեկավար- պատասխանատու է ռուբիկի եւ քննարկման ընթացքում տեղի ունեցող մեծ պատկերի հա

մար: Օգնում է մարդկանց կատարել իրենց տրված դերերը՝ անհրաժեշտության դեպքում հուշելով նրանց՝ հիշեցնե

լով, որ նրանք դեռ չեն կատարել իրենց գործը: Կարող եք խոսել միայն մեկ կամ երկու անգամ քննարկման կեսին

կամ ավարտին մոտ, որպեսզի դասարանը կենտրոնանա նպատակների վրա:

Հիմնական հատվածի առաջնորդ- Որոշում է քննարկման 2-4 հիմնական գաղափարներ, որոնք պետք է քննարկվեն եւ/կամ վերլուծվեն: Նրանք կարող են ընտրվել իրենց հիմնական սյուժեի կետերի կամ խորության/վերլուծական արժանիքների համար: Սրանք այն հատվածներն են, որոնք առանցքային են տեքստի սյուժեի եւ/կամ ըմբռնման համար՝ մեծ պահերն ու հատվածները: (Կարող է օգտակար լինել նախապես նշանակել այս դերը):

Մեթոդ ՝ պնդում, օժանդակում,հարցադրում.

Մեթոդի բացատրությունը

Պնդում կատարեք բացատրություն, մեկնաբանություն կատարեք թեմայի վերաբերյալ.

Հստակեցրեք օժանդակումը –զգում եք, տեսնում եք, գիտեք Ձեր պնդման մասին.

Հարց տվեք Ձեր պնդման վերաբերյալ ,ինչը՞ չի ներառում ձեր հարցադրումը:

Մեթոդ՝ Կողմնացույցի կողմերը

Այս մեթոդը զարգացնում է տեսակետ: Մեթոդի կարևորությունը կայանում է նրանում որ զարգացնում է իր չորս կողմերով քննական մտածողության հարցերի ձևակերպմանը և վերլուծելու եզրահանգելու դիրքորոշում հայտնելու ,սեփական տեսակետը ,հույզերը, մտահոգությունները ներկայացնելու ամբողջությունը այս մեթոդի մեջ

Հուզված-E

Մտահոգիչ-W

Դիրքորոշում-S

Պետք է իմանամ-N

Մեթոդ՝ Տես ,մտածիր, հետաքրքրվիր.

Նկարում տեսնում եմ..

Նկարում պատկերված է թե ինչպես ես նկարում

Այս նկարում ինձ հետաքրքրում է թե ոչ...

Մեթոդ՝ Եզրակացություն և ապացույց.

Այս մեթոդը շատ լավ է տեղայնացվում հասարակագիտության և պատմության դասաժամերին, եզրահանգման հիմքում ապացույցն է: եզրահանգման համար անհրաժեշտ է հստակեցնել և գնահատել ապացույցը: օր՝Ռոբը մռնչոց լսեց թփերի միջից, Եզրահանգեց որ այստեղ արջ կա.

Ապացույց ուժեղացող մռնչոցը գալիս է թփերից.

Օր՝ գրեք եզրահանգում և ապացույց այս նկարի վերաբերյալ.

Մեթոդի առաջին օրինակը՝

Դիտարկիր, հարցադրիր, եզրահանգիր

Ինչ՞ ես դու տեսնում նկարի,հատվածի մեջ.

Ինչ՞ հարցեր ունես նկարի հատվածի վերաբերյալ:

Ինչ՞ է տեղի ունենում ,Ինչ վարկած դու ունես այդ հատվածի վերաբերյալ.

Ինչ՞ եմ ես տեսնում

Ինչ՞ ես գիտեմ

Ինչ՞ կարող եմ ես եզրահանգել

Մեթոդ՝ Գույն ,սինվոլ, պատկեր

Այս մեթոդի էությունը կայանում է նրանում որ սովորողները թեման ուսումնասիրելիս ներկայացնում են իրենց գործնական աշխատանքը մեկ գույնով թե ինչպես են պատկերացնում տվյալ թեման, ինչ խորհրդանիշ կընտրեն, և ինչ պատկերով կբնութագրեին.

Այս բոլոր մեթոդները կիրառելի են ,անգամ համակազմ դասարաններում դասապրոցեսի մեջտեղում կամ ամփոփման դասաժամերին:

Քննադատական մտածողության հինգ ռազմավարությունը

Քննադատական մտածողությունը մտածելու գործընթաց է ,որը հնարավորություն է ընձեռում տարբեր աղբյուրներից ձեռք բերված տեղեկատվությունը ակտիվորեն և հմտորեն համակարգել,կիրառել, վերլուծել,սինթեզել,գնահատել և տեղեկատվությունը դասակարգել: Քննադատական մտածողությունը հավատքի, գաղափարախոսության և գործողությունների ուղեցույցն է հանդիսանում :

Քննադատական մտածողությունը ունի մշակված հինգ ռազմավարություն,որը հնարավորություն է ընձեռում ուսուցչին դասավանդման ողջ ընթացքում սաներին ուղղորդել հետևյալ հարցերով:Քննատական մտածողները ձևավորում են սեփական տեսակետը և չեն հակվում դեպի ուրիշի տեսակետը:

Ինչ՞ է քննադատական մտածողությունը

Ինչու՞ է այն անհրաժեշտ

Ռազմավարություն-1 հնարավորություն է ընձեռում մշակել բաց հարցեր .

- Ինչու՞ ես այդպես մտածում ,Ինչու՞,
- Կարող եք ավելի մանրամասնել այդ կետը ,կամ աղբյուրը, օրենքը, մեջբերումը.
- Այլ կերպ կարտահայտեք այդ միտքը:
- Կարող եք ինձ նկարազարդ տարբերակով ցույց տալ այդ միտքը,Ինձ օրինակ կբերեք:
- Ավելի մանրամասն կներկայացնեք
- Կարող եք ավելի կոնկրետ լինել:

- Արդյոք պետք է այլ տեսակետ դիտարկել:
- Կա արդյոք այլ տեսակետներ:

Այս ռազմավարությունը հնարավորություն է ընձեռում սովորողներին հարցադրումներ կազմել տվյալ թեմայի վերաբերյալ:

Ռազմավարություն-2

Այն հնարավորություն է ընձեռում սովորողներին փնտրել գտնել իրավիճակներ ,որը հնարավորություն է տալիս բացատրել և հիմնավորելու սեփական տեսակետը ,դիրքորոշումը:

- Զանազան իրավիճակներում որոշումներ կայացնելը:
- Դեպքերի ուսումնասիրությունը
- Որոշումները ճիշտ բացատրելը և հիմնավորումը

Ռազմավարություն-3.

- Թիմային աշխատանքի խրախուսում,խճանկար,բաց թողնված տարր.
- Տարբեր տեսակետների ներկայացում
- Տարբեր պնդումներ ներկայացում և քննարկում, չորս անկյունների մեթոդը կարելի է այս ռազմավարության ընթացքում կիրառել:
- Տեսակետների շղթա:

Ռազմավարություն -4.

Ստեղծագործական մտքի կամ մտքերի զարգացումն է ,որտեղ սովորողները նախագծային աշխատանքի ժամանակ կարող ենք լիարժեք կիրառել**:**

Ռազմավարություն-5.SEE-1

Stateit-Արեք Ձեր պնդումը

Elaborate-մանրամասներ ներկայացրեք,մշակեք պնդումը,այլ և ներկայացրեք այլ բառերով**.**

Example- բերեք օրինակներ Ձեր իսկ իրական կյանքից և հիմնավորեք

Lclustrate- պատկերազարդեք օրինակ դա կարող է լինել,գրաֆիկ,նկար ,քարտեզ, և այն փորձեկ ներկայացնել Ձեր իսկ պատկերացմամբ:

Ուսուցչի քայլերը

Այս ռազմավարությունները ներկայացնելու ընթաքում ուսուցիչը չպետք է շտապի ներկայացնել ճիշտ պատասխանը այլ թույլ տա որ սաները ինքնուրույն հետազոտեն գտնեն և ներկայացնեն սեփական դիրքորոշումը տարանջատելով, սյուբեկտիվ և օբեկտիվ կարծիքները, բերեն սեփական օրինակները և կարողանան տալ դրանց հիմնավորումները : Պետք է ուսուցիչը նախ ստեղծի առողջ մթնոլորտ , համագործակցային կարողունակություններ զարգացնի, դիմացինին լսելու, նրա կարծիքը հարգելու ,վերաբերմունք, ապրումակցում, այս ամենից հետո նոր թույլ տա որ սաները անկաշկանդ արտահայտեն իրենցմտքերը և տեսակետները:

.EduArmenia-Համահայկական առցանց կրթական հարթակ

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ М. НАЛБАНДЯНА M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK У Ч Е Н Ы Е З А П И С К И Գ Ի Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր S C I E N T I F I C P R O C E E D I NGS Պրակ Բ Выпуск Б Issue B ՀՏԴ 37.032 ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔՆՆԱՀԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Խաչատուրյան Ռ. Ս.էջ:

- Եվրասիա համագործակցություն հիմնադրամ . Տրամաբանական սխալների և հռետորաբանական շեղող կիրառուկներ քննադատական մտածողության և մեդիագրագիտության դասընթացներ.հավելյալ ուսումնամեթոդական նյութեր.Երևան 2019.
- Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական 2/13/2012 Հեղինակ՝ Արևիկ Անափիոսյան Հետազոտությանն աջակցել է՝ Շառլոտ Ֆրիմանը Ուսումնասիրությունն իրականացվել է ԲՀԻ Օժանդակության Հիմնադրամի ծրագրերի շրջանակներում :Ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացումն ուսումնական գործընթացում: Հակոբյան Գրետա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստան.էջ 122.

Դասապլան

Իմ այս պլանով ցանկանում եմ ցույց տալ սովորողների և քննադատական մտածողության և սոցիալիուզական և կարողունակությունների զարգացումը այդ թվում նաև ՏՀՏ գործիքների կիրառումը:Ես Դասավանդիր Հայաստանի ուսուցիչ լինելով ,իմ դասերը պլանավորում եմ ՈՒՀՁ ձևաչափով: Այս ձևաչափը մշակել և իր ուսուցիչների դատին է հանձնել Դասավանդիր Հայաստանը.

ՈՒՀՁ Դասի պլանի ձեւանմուշ

1. ՈՒՍՈՒՑԻՉ	2. ՊՈԱԿ դպրոց	3. ԱՌԱՐԿԱ
Սյուզաննա Հովսեփյան	**Շողակաթի միջնակարգ դպրոց**	**Հասարակագիտություն**
4. ԴԱՍԱՐԱՆ	**5. Ամսաթիվ**	**6. Ժամ**
10/11րդ	**25 . 02.2022թ**	**2**

7. Դասի նպատակ		
Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին: Հիշե՛ք Բլում-Անդերսոնի աստիճանակարգը:		
10-րդ դասարան *Թեման՝ Հոգեբանության հետազոտության մեթոդները.* Բացատրել՝ Հոգեբանության հետազոտության մեթոդները. Ներկայացնել՝Ինչ է Դիտում և գիտափորձը. Մեկնաբանել Վարքի և գործունեության արդյունքները. 11-րդ դասարան Թեման Պետության դերը հասարակության մեջ. Թվարկել ՝պետության հասարակական առաքելությունը Բացատրել ՝ պետության գործառույթները	**Աշակերտի հմտություններ** թիմային աշխատանք համագործակցություն	**Ուսուցչի հմտություններ** **ժամանակի կառավարում**

8. Անհրաժեշտ նյութերը, պարագաներ	**9. Դասի** բանալի հասկացությունները, անվանումներ, սահմանումները, որոնք աշակերտը պետք է սովորի	**10. Գնատահում**
Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար՝դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:	Ի՞նչ կարեւոր հասկացություններ, սահմանումներ, անվանումներ, կան :	Ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք)
Համակարգիչ,սլայդ, ֆլիչարտ թղթեր, գիրք, գրիչ, տետրեր,մարկեր	• *Դիտում. փիլիսոփաներ, գիտափորձ, թեստ, միջառարկայական կապեր, օբեկտիվ պասիվ,* • Հասարակական խնդիր, պետության խնդիր, պետության գործառույթներ, ներքին արտաքին,ֆինանսական, տնտեսական, իրավական, բնապահպանական	• Ընկալման ստուգում • Ուղղորդված աշխատանք • Ինքնուրույն աշխատանք • Ամփոփում կահոտ

11. Դասի սկիզբ-3 րոպե	
Այս հատվածում դուք պետք է բացատրեք ձեր «ինչու» կարեւոր դրույթը եւ ինչպես է այն կապվում ձեր մեծ նպատակի հետ: Գրեք ինչպես, ինչ մեթոդով եղանակով եք իրականացնելու դասի սկիզբը, ինչ հրահանգներ եւ հարցեր եք տալու: Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները: **Ուղղորդումներ պլանավորելու համար** 1. Վարքային եւ այլ սպասելիքների ներկայացում 2. Ի՞նչ են սովորելու աշակերտները (դասի թեման եւ նպատակը) 3. Կարեւոր դրույթների ու բառապաշարի ներկայացում,	Ուսուցիչը ողջունում է սովորողներին և հոդորում բացել իրենց տետրերը և գրել իմ ուժեղ հատկանիշները իմ հետաքրքրությունները.Որի համար ունեն 1 րոպե բանավոր պատասխանելու համար. Վերջացնելուց հետո նշում է Արդյոք մենք լավ ենք ճանաչում դիմացինի հույզերը , Երբևէ անց եք կացրել դիմացինի հետ թեստ,կամ վերլուծել եք սեփական վարքագիծը: Ինչ եք հասկանում պետության գոռծառույթ ասելով Որ ն է մեր առաքելությունը

որոնք օգտագործվելու են դասի ժամանակ 4. Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: 5. Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր: 6. Ի՞նչ են պատրաստվում անել դասին: 7. Խթանիչ վարժություն (եթե կա) **ՈՒՀՁ (ՍԴԼ) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** - Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար - Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ - Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը - Բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար -Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը - Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը - Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները	Ուսուցիչը նշում է դասի նպատակները. Ֆլիչարտ թղթի վրա գրված կլինեն նպատակները և կցուցադրվեն աշակերտներին:

12. Նոր նյութի ներկայացում-15 րոպե	
Ներկայացրեք ***ինչ են սովորում աշակերտները,***	**Ուսուցիչը** սահիկաշարով ներկայացնում է Հոգեբանության հետազոտության մեթոդները.
Ինչպես են իրականացնելու՝ թվարկել այդ քայլերը, այսինքն՝ ձեր «ինչ» եւ «ինչպես » կարեւոր դրույթները:	*Խնդրելով մեկ աշակերտի նաև գրատախտակին գծել սխեմա առանձնացնելով հետազոտության մեթոդները:*
Բերեք օրինակներ «ինչ» եւ «ինչպես » կարեւոր դրույթների համար:	*Ամփոփման հատվածում տրվում է ընկալման ստուգման հարցեր,որին սովորողները պատասխանում են բանավոր, որը նաև տեսանելի կլինի սլայդում.*
Գրեք ինչպես, ինչ մեթոդով եղանակով եք իրականացնելու նոր նյութի ներկայացումը, ինչ հրահանգներ եւ հարցեր եք տալու:	
Ուսուցչի եւ աշակերտների գործողությունները:	***1. Հետազոտության ինչպիսի մեթոդներ են կիրառվում հոգեբանության մեջ.*** ***2. Ինչ ենք հասկանում դիտում կամ գիտափորձ ասելով.*** **3. *Ինչքանով ենք մենք կարողանում ճիշտ բացատրել մեր վարքային գործողությունները.***
ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ -Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը -Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով -Ակտիվացնել արդեն առկա	**4. Որն է պետության հասարակական առաքելությունը.** **5. Ինչ են պետության գործառույթները** **6. Թվարկել՝Պետության ներքին ինչ՞ գործառույթներ գիտեք**

գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ -Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ -Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին -Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը -Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը	
Գրեք ընկալման ստուգման հարցերը, որոնք դուք պլանավորում եք հարցնել դասի ընթացքում ձեր աշակերտներին յուրացված նյութը ստուգելու համար նախքան ուղղորդված աշխատանքին անցնելը:	
13. Գործնական աշխատանք- 15րոպե	
Նոր գիտելիքն ու հմտությունը կիրառելու հնարավորություն ստեղծեք ձեր ուղղորդմամբ:	**Ուսուցիչը հրահանգում է նախօրոք բաժանված թիմերով մոտենալ իրենց սեղաներին ,որոնք համարակալված են առաջին և երկրորդ, որտեղ դրված են դիդակտիկ նյութեր :**

Գրեք ինչպես, ինչ մեթոդով/ եղանակով եք իրականացնելու գործնական աշխատանքը, ինչ հրահանգ/հրահանգներ եք տալու:	**Թիմերին նաև ներկայացվում է ուղղորդված աշխատանքի կանոնները և ժամանակը: Հրահանգում է թիմերին**
Գրել ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները:	***Ներկայացնել՝*** **1-խումբ** **Հետազոտության ինչպիսի մեթոդներ են կիրառվում հոգեբանության մեջ,դրանցից որոնք են Ձեզ ծանոթ.** **2-րդ խումբ** **Ներկայացնել ինչ է դիտումը և գիտափորձը.Մեկնաբանել վարքի և գործողությունը:**
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու: 2. Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում : 3. Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու 4. Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու: 5. Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են:	**11-րդ դասարան՝** **1-խումբ.** **Ներկայացնել Որն է պետության հասարակական առաքելությունը** **2-րդ խումբը** **Բացատրել պետության գործառույթները.**
ՈՒՀՁ (ՍԴԼ) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ -Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները - Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները -Աջակցել պլանավորման ու	***Հրահանգներն են՝*** ● ***Ընտրել թիմում ավագ, ով կլինի պատասխանատու թիմի աշխատանքին ներկայացումից մինչև աշխատանքը*** ● ***Ընտրել ժամապահ,*** ● ***Միմիյանց լսել և հարգել դիմացինի կարծիքը*** ● **Աշխատանքը ներկայացնելու համար ունեք 10-րոպե,** ● **Յուրաքանչյուր թիմ ունի 5- րոպե աշխատանքը ներկայացնելու բանավոր գրատախտակի մոտ** ● **Կատարելու ենք նաև թիմերի փոխադարձ**

ռազմավարությունների զարգացման գործընթացին -Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը -Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը - Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը -Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ	**գնահատում** • **Նոր ծագած դժվարությունների և հարցերի անհրաժեշտության դեպքում դիմել ուսուցչին:** **Առաջադրանքի վերաբերյալ տրվում են ընկալման ստուգման հարցեր:** **Արդյոք հասկանալի է առաջադրանքի պահանջները:** **Որքան՞ ժամանակահատված է նախատեսվել պատասխանելու համար:** **Խմբերի ներկայացումից հետո նաև ուսուցչի կողմից տրվում է հետադարձ կապ: Աշակերտները նույնպես նախօրոք պատրաստված իրականացնում են փոխադարձ գնահատումը :**

14. Ինքնուրույն աշխատանք- 3րոպե

Գրե՛ք ինչ ինքնուրույն աշխատանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար: Գրե՛լ առաջադրանքի հրահանգը, ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները: **Ուղղորդումներ պլանավորելու համար** 1. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: 2. Ի՞նչ վարժություն, առաջադրանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար	1. **Ուսուցիչը յուրաքանչյուրին հանձնարարում է իրենց տետրերում գրել ,** 2. **Հոգեբանության որ բնագավառը ձեզ ամենից շատ հետաքրքրեց.Կարող եք բերել մեկական օրինակ հոգեբանության և դպրոցի ձեր ուսումնասիրած առարկաների միջև.** ***11-րդ դասարան.*** ***Դասակարգել պետության ներքին գործառույթները աղյուսակի տեսքով*** **Տնտեսական գործառույթ** **Ֆինասական** **Սոցիալական** **Կրթամշակույթային** **Իրավական** **Բնապահպանական**

ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ -Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար **-Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները - Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով - Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը - Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով - Չարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները	
15. Դասի ավարտ-5 րոպե	
Ամփոփեք դասի նպատակը, կարեւոր դրույթները՝ նշեք **Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին** **Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին**	Ուսուցիչը աշակերտների հետ միասին կատարում է անդրադարձ դասի նպատակներին: Ապա աշակերտներին տրվելու են ամփոփման հարցեր կահոտ վարժության միջոցով 11

Բացատրեք տնային հանձնարարությունը եւ հաջորդ քայլերը:

Ուղղորդումներ պլանավորելու համար

1. Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին
2. Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին
3. Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում

ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

-Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը

-Օգտագործել ուսունառության վերջնարդյունքի ձեւավորման եւ ստեղծման բազմապիսի միջոցներ

-Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը

-Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը

- Զարգացնել

ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները	

Եզրակացություն

Հարկ ենք համարում նշել, որ յուրաքանչյուր պետություն ինքն է սահմանում այն նպատակը, որին ցանկանում է հասնել կրթության միջոցով: Ցանկացած որոլտի զարգացման հիմքում ընկած է համապատասխան կրթությունը և պատահական չէ, որ կրթության ոլորտի բարեփոխումները խիստ ռազմավարական բնույթ են կրում:

Քննադատական մտածողությունը իր կիրառական–առարկայական դրսևորմամբ այն մոտեցումն է որտեղ ցանկացած կոմունիկացիան վերլուծում է յուրովի իր տեսակետից, թե ինչ իշխ է դրված նրա հիմքում ,այսինքն ինչպես է հաղորդակցություն ուղղարկում, այլ անձանց և նրանք ինչ դրսևորում են ցուցաբերում կամ մեկնաբանում լսածը կամ տեսածը: Յուրաքանչյուր ոք , սան առավել ևս պետք է կարողանա զարգացնել իր մոտ քննական մտածողություն որը սերտ կապ ունի նաև մեդիագրագիտության հարակից այլ առարկանների հետ , ինքը պետք է կարողաննա համադրել ,վեր հանել խնդիրները տալ դրանց լուծումները: Կարողաննա ներկացնել փաստարկներ, հակափաստարկներ ,որը շատ կարևոր է և հասարակագիտության և պատմության դասաժամերին: քննադատական մտածողության հմտություններին լավ տիրապետելու համար մարդուն անհրաժեշտ է ունենալ այսպես ասած պոզիտիվ մտածողություն: Դա նշանակում է ունենալ արժեքներ որոնք լինեն չափանիշներ իր գործունեության, իր վարքի նպատակների միջև խոր անդունդ չլինեն, և իր առջև դրվի իրագործելի չափելի նպատակներ, ասելիքը և գիտելիքը դարձնել փաստարկված,այսինքը եթե անգամ իր տեսակետն է արտահայտում պետք է լինի համոզիչ և լսելի:Այս օր մենք դպրոցներում տալիս ենք փաստային գիտելիքներ բայց չենք տալիս լիրաժեք սովորողին քննական մոտեցում, ինչպես հայտնի իր դիրքորոշումը, ինչպես համադրի փաստերը, տարբերակի տեսակետը, վերլուծելու կարողունակությունը դարձել է ակտուալ և մեր կրթական խնդիրներից մեկը :Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման խնդիրը խիստ բազմաշերտ է: Այստեղ կարևոր են առարկայական ծրագրերը, դասավանդման մեթոդները, ուսուցչի ուղղորդիչ դերը, գրականության մատչելիությունը, դասընթացի տևողությունը, և անկասկած շատ կարևոր է, թե որքանով է ուսուցիչը անձամբ տիրապետում քննադատական մտածողության հմտություններին: «Քննադատական մտածողությունը մտածողություն է մտածողության մասին, երբ Դուք դատում եք՝ Ձեր մտածողությունը կատարելագործելու նպատակով»:[3]

3.Ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացումն ուսումնական գործընթացում: Հակոբյան Գրետա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստան.

Գրականության ցանկ

1) Եվրասիա համագործակցություն հիմնադրամ . Տրամաբանական սխալների և հռետորաբանական շեղող կիրառուկներ քննադատական մտածողության և մեդիագրագիտության դասընթացներ.հավելյալ ուսումնամեթոդական նյութեր.Երևան 2019.
2) Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական 2/13/2012 Հեղինակ՝ Արևիկ Անափիոսյան Հետազոտությանն աջակցել է՝ Շառլոտ Ֆրիմանը Ուսումնասիրությունն իրականացվել է ԲՀԻ Օժանդակության Հիմնդրամի ծրագրերի շրջանակներում.
3) Ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացումն ուսումնական գործընթացում: Հակոբյան Գրետա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստան.էջ 122.
4) EduArmenia-Համահայկական առցանց կրթական հարթակ.
5) Շիրակի .Մ Նալբանդյանի անվան պետական համալսարան, գիտական տեղեկագիրք.Պրակ Բ. Շիրակի ՀՏԴ 37.032 Մանկավարժություն աշակերտների քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանման ընթացքում Խաչատրյան Ռ.Ս էջ .
6) Դասապլանի ձևաչափ. Դասավանդիր Հայաստան միջազգային կրթական կազմակերպության Հայաստանյան ծրագիր.